

Լրաստրակ լրաստրակ՝
Քարի վաստակ՝
Քոնի թռչե,
Պինը պիսդ գողի. — Կարմ. ¹⁾

Կապիմ կու կեշտայ,
Ացկըրիմ ²⁾ կու, կենայ կու. — Տրեկ.

Կարմիր երջը յօրոր ³⁾ գումը ⁴⁾ զնաց,
Պոլը ձուքս մնաց. — Կերոսա, Բար.

Կարմիր կով մը ունիմ, կու պողչայ, ⁵⁾ պողչայ,
Գնենուց տակնիվեր ⁶⁾ բազուկի կեշտայ. — Արմատ.

Կով մը ունիմ ըլուր մեղեր.
Կոտոշուղնին (Խղիւր) սրուր մրցը,
Կաթ կուտայ, տուն գալ չի. — Լարոսա. ⁷⁾

Կով մը ունիմ, օնի օնի,
Կոտոշուղնին ծըրծընի. — Քարպիճնե, Միշտառ եղ.
Իհրատար.

Ե Յ Գ.

Ճաղիկ, ես քո ճաղէն եմ:
Վիճկի մէջէն թառէն եմ:
Քամին վեր բցեց
Վաթանս մնլորեր եմ:
Այ օրան օրան ճաղիկ,
Կարմիր ու տօրան ճաղիկ,
Տարին մէ խետ ես զալը:
Գամ քեզի զովամ ճաղիկ:
Ճաղիկ ճաղկավանայ եմ:
Ասըլ Երեսանայ եմ:
Տարին մէ խետ էս զալը:
Թազայ նուպարխանայ ես:

Ա Հ Օ Թ Ք Ն Ե Ռ.

Ա.

Էկան երեք ծիասոր
Մէկն էր Յիսոտ՝ մէկ քրիստոս.
Մէկ ննծանաց Աստուածածին,
Էկան սարով,
Ծրջան ծորով,
Քատունըլինգ խաշալամով:
Խարցուցի. ի՞մ Տէր, ողորկերթաք բարով.
— Կերթամ դուն խիննին,
Կ'ելնիմ էրդիս տղացկընին,
Բանվիս թալիմ բոլոր բարձին,
Զվալսնայ միրտն ի փորին.
Չուր ի զալոց Քրիստոսին:

1. Անե մատորի ննան վերան հայուակով թէւ կը փարարեն.
2. Կապուած մի կով. եղ արմակէ կամ թէի և լուսնի ժայռերն
որ միմէնց կապուած են արձակին. Յ. Սրբ. 4. Գամ. Յ Բա-
ռային. 6. Վեր էր բանակէ վեր. 7. Ամեմից որը ճաց կը լինեն.

Աստուածածնի մասով,
Լուսալորչի խաչով՝
Արտ ա սաներ (ցաներ),
Ափն ա բուսեր,
Մեր տէրն ա էկեր, զարմացեր,
Ասեր-չիք ես չքանաս,
Ապառաժ քարեր լուսանաս:*

Գ.

Խող ես խալիք,
Խիլ ես թոփիք,
Աստուածածնայ մկութն ինէ:†

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ.



ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԲՈՐԻ ՏԱՂԱ-
ԶԱՓՈԽԹԵԱՆ ՄԱՍԻՆ *

(Յ. խան Մասէմեանի «Համեսի» Թարգմանուենան
առթիւ).

« Արարատի անցեալ համարում խօսելով
« Համէտի » հայերէն նոր թարգմանութեան մասին՝
մեր յօդուածը մենք վերջացրինք նորանով: որ ասա-
ցինք թէ Յ. խան Մասէչեանի ընտրած տաղաչա-
փութիւնն արժանի է ուշադրութեան և խոստացանք
այդ մասին էլ մի երկու խօսք ասել:

Մեր նորակոյն գրականութեան մէջ ընդուն-
ուած տաղաչափական ձևերը ինքն ըստ ինքեան մինչ
այն աստիճան անկերպարան են և օբէնքները մինչ
այս աստիճան անմշակ ու խառնաշփոթ: որ մեր,
յատկապէս ռուսահայոց նոյն իսկ լաւագոյն բա-
նասեղծները մեղ երկում են որպէս արհամար-
հող բանաստեղծութեան այն անհրաժեշտ պայման-
ներից մէկի, որ է գեղարուեստական արտայայտու-
թեան արտաքին ձևը: Մեր հին բանաստեղծ-
ները, զոր օրինակ Շնորհալին, զարմանալի խոստա-
պահանջ են այդ կողմից և ամենայն կանոնաւորու-
թեամբ հետևում են որոշ օրէնքների: Ճշմարիտ է,
մեր շարականներն իրօք գեռ օրինաւոր կերպով ու-
սումնասիրուած չեն տաղաչափութեան տեսակէտից,
և Հ. Ա. Քադրատունու «Հայկական» շափով մեր բռ-
լոր շարականների կազմութիւնը բացատրուել չէ
կարող: թէպէտ և նորանից շատերն այն հիմքն ու-

* Ապառաժ Քարերու վերայ փոխաղբուած է այդ վեր-
քըն Քրիստոսի հրաշիք, որ կայ այժմ՝ քարաքու անուան
նման ան վեռքին, որ մէրթիք կը կուռի: Այս աղօթքիս
անունն է մէրթիք վեռքի: աղօթք:

† Այս խօսքեն ասում են ցաւած աշխն երեք ան-
գամ տրորելով:

նին, որի վրայ հանձարեղ Մխիթարեան վարդապետը կառուցել է իւր տաղաչափութեան շենքը, Կարծում ենք որ մեր Հնագոյն չափերի և շարականների կազմութիւնը մասնաւորապէս՝ կը պարզուէր մեզ համար միայն ժամանակ, երբ մենք հնարաւորութիւն աւնենայինք ուսումնասիրել նոցա՝ երաժշտական եղանակների հետ միասին, որովհետև տաղաչափական արուեստը հիմնուած է իսկապէս երաժշտական օրէնքների վերայ:

Առ ժամանակ մի կողմ թողնելով մեր այդ հնագոյն տաղաչափութեան խնդիրը՝ մենք կը խօսնենք մեր արդի բանահիւսութեան մէջ գործածուող չափերի մասին, որ սովորաբար կոչուումէ «թուական» կամ «վանկական», տաղաչափութեան այդ ձեզ մեզանում սկսուումէ միջին դարերից, և ներսէս Ընորհալին այդ չափական խօսքի ամենապատուական ներկայացուցիչն է:

Մենք ուշադրութեան արժանի պիտի համարենք ամէն մի փորձ, որի նպատակն է կանոնաւորել կամ առաւել ևս, ճօխացնել մեր աշխարհաբարի տաղաչափական ձեւերը, և «Համլէտի» նոր թարգմանիչը իւր գեղարուեստական ճաշակի ապացոյցն է տալիս, երբ բնագրի չափին համապատասխան, յարմարաւոր չափ է որոնում հայերէնում—ի՞նչ չափով թարգմանել հայերէն, որ ան նոյն ոյնը յայնէ իլէւէլ և ընդհանրապէս նոյն այն՝ ուրաքանչին։ Այս հարցն իսկապէս ամէն մի հայ բանաստեղծ թարգմանչի համար գայթագութեան քար պիտի լինի, մանաւանդ որ և է դասական գրուածք թարգմանելիս, որպիսի են Ծէքսպիրի, Շիլլերի և այլոց գործերը, Նախ և առաջ մի անհրաժեշտ պայման պէտք է ճանաչել այն, որ թարգմանութեան ոտանաւորն անյանդ լինի, երբ բնագրին էլ անյանդ է. ինքն ըստ ինքնան ծիծաղելի է յանդաւոր տողերի վերածել Հոմերոսի վսեմ ստեղնի վեցաշափը կամ Եօքիլոսի ու Սոփոկլէսի չքնաղ մեծավերջի եռաչափը, գորա գեղեցիկ են իրանց պարզութեամբը, առանց յանդի՝ որ մի աւելորդ սեմեւեթ է և նոյն իսկ բեռն յունական կամ լատինական վերին աստիճանի ներդաշնակ տաղաչափութեան համար, Գեղարուեստական թարգմանութեան պայմաններին շատ աւելի համապատասխան է և. և. Բագրատունու «Խլիականի» «հայկական» տաղաչափութիւնը, քան և. Ե. Թումաճանինը իւր միմեանց անդհիշատ յաջորդող յանդերով, որ բացի գորանից հենց յանդերի պահանջով կաշկանդուած լինելուն պատճուի բաւականին չեռացել է յոյն բնագրից, մինչդեռ Բագրատունին տեղաւորելով իւր մի տողի մէջ մի վեցաշափ՝ գրեթէ չէ շեղուում բնագրից, ըստ ամենայն մասանց։

Ծէքսպիրին էլ նոյնպէս պէտք է վերաբերուել ինչպէս և Հոմերոսին, Սոփոկլէսին, և աչատեղ է ինդիրն յառաջ գալիս—ի՞նչ չափ ընտրենք որ թէ բնագրին յարմար լինի և թէ մեր աշխարհաբարի կարողութեանը համապատասխան։

Մեր տաղաչափութիւնը վանկական է, ուրեմն որ և է բնագրի (եթէ որպա տաղաչափութիւնը շեշտաւոր է, ինչպէս օրինակ՝ անգլիականն է, կամ չափական է, ինչպէս օր., յունականը կամ լատինականն է) տողերի մեծութեանը, վանկերի միջին թուին մօտ տող պէտք է ընտրել և մեր չափերից, Սակայն այդ ընտրութեամբ խնդիրը չէ վերջանում։ մի հանգամանք կայ, և կարեար հանգամանք, որի վրայ մեր թարգմանիչներն առ հասարակ ուշք չեն դարձել այդ այն է որ վանկական տաղաչափութիւնն ընդհանրապէս անյանդ լինել չէ կարող, Կարո՞ղ էք արդեօք երևակայել ֆրանսիական լուսաւորութեանը առանց յանգերի, կամ որ և է այլ չափ գոյացութիւն ունի՞ ֆրանսերէնում առանց յանգերի, նոյնը մենք առում ենք նա և մեր աշխարհաբարում գործածուող չափերի մասին, մինչև մի պայմանական անյանդ չափի ընդունուիլն ու ընդհանրանալը։

Ուստահայոց մէջ լցոս տեսած բոլոր թարգմանութիւնները * Ծէքսպիրից, Շիլլերից, Լեսսինգից, ի բաց առեալ պ. Մալխասեանի «Մակրեթի», և Մասէչեան խանի «Համլէտի» թարգմանութիւնները, գրուած են տամավախնկ անյանդ տողերով, որ հայերէնի համար ուսանաւոր չէ, — Տէր, միթէ այդպէս խօսել վայել է մի թագաւորի, Ո՞վ կը հըրաժարուի այդպէս մի թագից, Յետին հպատակդանգամբ զոհումէ ստացուածք և արիւն իւր գաղափարին, իւր ատելութեան, իւր սիրոց համար, Կուսակցութիւններ սկսում են կազմուիլ, երբ քաղաքական կառուի արիւնու գրօշը պարզուումէ։ Կարո՞ղ էք արդեօք գուշակել որ այս հատուածը ուսանաւոր է բայց աչա եթէ տաս—տաս վանկ հաշուելով տողատէք՝ այս կտորից կստանաք ութը ուսանաւոր, որ մենք վերցինք «Օրէանի կոյսի» ** առաջին բացած երեսից (Ա. գործող, երևոյթ 5), Ինչից է յառաջանում այս երևոյթը. մեր սովորական խօսակցական լեզուն արգելն այնպէս է որ յաճախ գուցէ մենք անդիտակցարար խօսում ենք այդպիսի ուսանաւորով, քանի որ դորա միակ պահանջը հնդավանկ անդամ կազմելն է, եւ մանաւանդ եթէ պահանուում շեշտի պայմանը, այսինքն որ ան-

* Խնդուրդին բանաստեղծական գրուածքների մասին շնոր խօսում, որովհետև դոքա շատ սակաւ բացառութեամբ քնարերգութեան նն վերաբերում եւ գրուած են, ինչպէս եւ եղած վիպականները, յանգաւոր ուսանաւորով։

** Թարգ. Գ. Բարխուդարեանի:

պատճառ ամեն անգամ՝ լեզուանք վանկով վերջանայ: այն ժամանակ և ոչինչ ոիթմ չէ մնամ: ուս բեմն էլ Բնշ ստանաւոր: միթե նշանարիտ չափաւոր տաղ է: որինափ: «Առուի արիւնատ գրաշը պարզուում է»: Մեր համեստ կարծիքավ ուսումնայ ուսմանը անցանք տողերը ստանաւոր չեն կարող ճանաչուի:

Անցնենք միւս չափերին: Մենք ունինք ստանաւորի քառականի և եռականի անդամներ: սոցանիք ստանաւորի տաղ կազմելու անշաւշա տեսիք արուեստ և պահանջում: և եթե շեշտի պայմանը (անգամների վերջին վանիը շեշտաւած) ճշգութեամբ պահպանուի: այն ժամանակ քառականիներով ու եռականիներով կազմուած տողերը կունենան իրանց սրաց ոիթմը: երաժշտականութիւնը: և յանդը կարող է անշրաբեց պայման չհամարուել այդտեղ Պարզենք մեր միուրել որինակներուի:

Թրանսերենում՝ պահանջումնեւ առջ մեջ վանիքերի մի սրաց թիւ: տողը մի զինուոր հատած ունի՝ սոցան վրաց եթե յանդն էլ տեխացնենք: էլ ուրիշ պայման չի պահասիլ կանանաւոր տաղ կազմելու համար:

Il n'est temps encore | de chercher le trépas,
Ton prince et ton pays | ont besoin de ton bras.

Եթե այս տողերի համապատասխան հայերենը վերցնենք: մենք կը նկատենք որ հայկական չափը մի այլ պահանջ էլ ունի: որ ֆրանսերենում անշրաբեց չէ և որ հայկական տողին մի ստանձնն ոիթմ է տալիս: Անձնագործ | գու. մահարձան | քեզ կանգնեցիր: Աչ հազարիթ | որովես երկամ | կամ որձորար— Հզոր զրչով | սուրբ վաստակով | ու անձանձիր Շունչ կենդանի | և յետ մահանան | հանդիսացար:

Եյտեզ բացի այն պայմանից: որ տողերը բաւուն էլ հաւասարագեն 12 վանկ ունին և միմեաց մեջ ընդ մեջ յաջորդող յանդեր իւրաքանչիւր տող բաւանուում է երեք հաւասար: քառականի անդամի սրաց մի անձնափորիկ փոփոխութիւնը կը խանդարէ ստանաւորի կանոնաւոր ներդաշնակ ընթացքը:

Դու անձեռագործ մահարձան քեզ կանգնեցիր —

Եյս տողը՝ ուր միայն առաջին երկու բան է յետ ու առաջ զրուած: արգելն անկանոն է: չնայիւնք որ նոյն 12 վանկը անփոփոխ է մնացել թուի կողմից: նոյն կանոնաւորութիւնը պիտի պահպանուի քառականիներից ու եռականիներից բաղկացած և այլ տողերի մեջ: Ա. կ—կ—կ Բ. կ—կ—կ
կ—կ—կ ... կ—կ—կ ...
Գ. կ—կ Դ. կ—կ
կ—կ ... կ—կ ...
... կ—կ Ա. պիտի:

Կոյն երեսընթը տեղի ունի նո և հնդավանկնենք իր կազմած տողերի մեջ: ուր չէ կարելի օքի տեղ գնել կոնի կ: իսկ յաջորդ անգամնեմ 0 վանկ և ընդհանուր կատար:

Մեղմից չատ առաջ կար մի թագուար կամ մեջ մեջ մենք ունինք երկու օքինք: Ա—ավանկ անգամի իսկ եթե առելու լինենիք թի թագուար մեզ նից չատ առաջ կար: — այս այլ ևս ստանաւոր չէ: թեպետ նոյն բաներն են և նոյն 10 վանկը:

Այս համամականքը մեր տաղաչափութեան առաւելութիւնն է: և գորանով մերը գերազանցում է քրանչիսկանիցից:

Եյս և սացա նման չափերից զատ՝ մենք ունինք Բագրատունու մշակած չափը: որ յայտնի է: հայկական: անուամիք: այդ տաղաչափութեամբ Բագրատունին թարգմանենք և Ա. կ—կ—կիուի: Մշակականիք: Հանձերուի: Ելլականը: Առփուկէսի: Ասունի: Առլուկերի և Ալֆիերիի սղրերգութիւններից (Հայկական չին և նոր սղրերգութիւննեց): զրել է իւր Հայի Դիցազն քերթուածը: Եյս չափի հիւնական սրեմըն է կ—կ—կ—կ (10 վանկ): որ տրամարտական չեշտի չեարչի: կարող է այլ գերազանիք առնենք չեշտաւած մի վանկը կարող է համազոր թինել 2: Յ և նոյն իսկ է ամսանկի (տօր): Ցաղաչափութեան այս եզանակը բանականին ազատութիւն է տալիս բանասաղին միօրանակութիւնից խուսափելու: բայց որքան որ զա յարմար է զրարիթի: նոյնիքն էլ գժուար զործագրելի է աշխարհարարում: մնանանդ սուստիպացոց զրականական Ըեղաւածն ուր ամեն քայլափառում հեղինակը ստիգմատ պիտի լինի մեղանցելու չեշտի պայմանի գեմ (անգամի վերջին վանկի նկատմամբ) որից և կախուած է այդ չափի կանոնաւոր ներդաշնակութիւնը: Եսկ մեծ զրուածքի մեջ տառել ևս գժուար կը լինի խուսափել հնդականի և տեսիք վանկ սննդուածքութիւնը և այլ է յաջող զործագրութիւնը:

Հայկական տաղաչափութիւնը մեր աշխարհարարում զործագրել փորձեց պ. Ա. Մալխոսեանների և Մակրիելի թարգմանութեամբ որ սակայն կը մնայ այդ կազմից միայն որպես մի տպացոց: մեկ այլ է բարի ցանկութիւնը և այլ է յաջող զործագրութիւնը:

Սորանով մենք չենք կամենում իսպան մերժել հայկական տաղաչափութիւնը աշխարհարարից: մենք ընդհականակառ ցանկանում ենք որ այդ չափը մշականի: և կարծում ենք որ փորտածաւալ զրուածքներում այդ կարող է զործագրել յաղողութեամբ:

Մենք կուզեիմք միայն որ արդ չափը պարհագա-
րացը չը կաշկանգուեր բառանգամի ստումանովը,
պարտաւորական համարելով վերօրյակերեալ պատկերը
(16 վ.) որպէս հիմնական չափ։ Մի անգամը խու-
զելով մենք կ'ստանամի երեք հիմնական անգամն
օրոնք իրանց երրեմնակի սույն ներով կարող են
յարմարութեամից գործ ածուել նոյն իսկ անցանց
քնարական կտարների թարգմանութեանց համար։
Ելզապիսի փոփոխութեանց ենթարկում է և այսկա-
զան չափը նոյն իմքն Բագրատունին Սովորելուի
ողբերդութեանց պարերի բազմատեսակ չափերը հա-
յերենի վերածելու համար օրինակ։

Տիկ որդին | Եղանակը պայտ | ապաս աղեղն . . .

Վը ժնելիք | առջնապեցոյ | զը ժնելիք .

• Այս պատճենը | չե ինձ զանաբար | բարեկամիք իւն եքն:

Այսպէս արեւմն մենք սկզբունքը ընդունեաւ, մենք հայտական չափը աշխարհաբարի համար՝ խռա-
տվանելով հանգերձ՝ որ մեր աշխարհաբարի մի քա-
նի յատկութիւնները (և զիմորաշը, բայերի ներկան) խօս դժուարացնում են նարա յաջող գործադրու-
թիւնը: Միայն մենք կարծումներ որ ի զոր է ող-
Մատէնեանք Բազրատունու չափը Ըէքսոպիրի ող-
բերդութեանց համար՝ չափազանց երկար: Համա-
րում եւ յարմար միայն ուղարկելուն ինչու և առ
հասարակ այդ տեսակ բարձր (?) ոճի: Բազրատու-
նու տպերի հիմնական 16 վանկը սպաւելով կարող
է հանել մինչև 12 ի: Եթէ մըջինը 14 վանկ ըն-
դունենք: այդ նոյնչափ մօտ կը լինի Ըէքսոպիրի տա-
ղերին: որչոք և առմերասի վեցաշաբին: առաջնի
մի տպը պարունակում է 10 - 13 վանկ: իսկ առմ-
րասի վեցաշաբի հիմնական պեճը 17 վանկ է: որ
որոշ անգամներում առեղնի սպաւելու չնորհիւ պա-
հանում է: բայց սովորաբար 15 վանկից պակաս չէ
լինում: Այս իսկ պատճառով ահա չ: Ա: Բազրա-
տունին իւր չափը հաւասար յաջողութեամբ գործ է
զնում թէ առմերասի հիմնականի թարգմանութեան
և թէ Սովորվեսի ողբերգութեանց դիտազների (եր-
կանառութիւն) համար որոնց ձեւը մեծավերքի եւ
սուշափն է (12 վանկ): և վանկահաջուր նկատմամբ
առբըերութիւնը բազրըների համեմատ մեծ չէ:
ինչու իսկական է առմանեւ առաջնին որինակներից:

Δημήτριος Καλαϊδάς

Αγωνος — 15 φ

όρην μὲν οὐσιούς δέραν 'Ολύμπια δέρατα'

EXONTEC

Judithann — 154

East Columbia B. 17-19

Աղյուսակատարութեան հայերէն տաղերն են
Վարիդայք | և համագունդ | այլ ամբարար-
ձգ | պայտեցիք—15 Վ
Ցացեն | ձեզ առառածեք | սիմբական | յար-
կաց ըրեակք—13 Վ
Բանցել զքաղաք | Պրիամու | և զարձ ի տուն |
առնել բարեաւ—15 Վ

Ἐπειδὲ πάντας μοῦσος Ἀντιγόνη φίλων — 13 ϕ. *)
 εῦθ' ἡδὸς οὐτ' ἀλγεινὸς ἔκειται — 12 ϕ.
 Συντονίας αἰσθαλέφοις ἐπιτεργήθησεν θύρα, — 12 ϕ.
 μηδὲ θαυμάζεται ημέρᾳ διπλῇ χρεῖ. — 12 ϕ.

On the right: Wimpyville; 11-14.

Aug 6 p. 7, p.

Օխու և ոչ | մի բան ե՞տո | Անորդութեք | զսի-
բեկաց - Ին չ-

9.2. $\rho^{mqq\bar{q}p} + h.$ 9.2. $q \bar{q} m b + j \rho \rho \rho b \gamma b \gamma b + q \rho \rho \bar{q} b -$

Արկադիկ | Ժեզ | Երկնոցմեց | Եղբայրց Ժերաց |

app. sublumb—14 q.

Възможната съдба на съществуването има: 1) възможност за

թէ յաջողութեամբ գործարուի: վարպետի ձեռքի
կարող է տեղ ունենալ մեր աշխարհաբարում և յար-
մարել Ըեբասիրի: Ծիլերի ոչըերգութեանց շափե-
րին: թէ զետե և այդ շափը գեր քշերին և հասկանա-
լի: որովհետեւ աշխարհաբարում ցոյսոր շատ թոյլ
փոքեր են եղել նորանից սպառելու: Մենք
կաւելացնենք այսուեղ այն: որ մի անհրաժեշտ սոսյ-
ման չենք համարում: Հայկական: առի քառան-
գամ: Եները: և պահան անկածներոց առղերի որի-
նակներ կարելի է գտնել թէ մեր շարականների մեջ
և թէ նոյն խոկ չ: Ա: Բայրատունու զրչի տակից
եւած: ինչպէս որ արգելն ցցց տուինք: Այժմէ հարկը
պահանջէ: մենք հարաւոր կը համարենք զործ ա-
ծել բացի հիմնական կ—կ—կ—կ տողից նաև հիմ-
նական կ—կ—կ իւր սղումներով Յ—կ—կ: կ—կ
—Յ: կ—Յ—կ և այլն: նմանապէս հիմնական կ—կ:
այսինքն ութապանկ տողեր: որի օրինակն էլ կը կի՞ն
տալիս և մեզ Բայրատունին յօյն որըերդութեանց
պարերդների թարգմանութեան մեջ:

¹⁾ Այսպիսի տողեր պատճեմ են երբեմ, առաջըն
վանկը համարում է պատեղ շափթ դուրս, եթերդ վան-
կից մնան վերը՝ տող կազմուած և վեց կանոնաւոր մե-
ծավարչից

Ոչ քեզ միայն | ցուցան երկունք՝
Որդեակ, ի մէջ | մահկանացուաց,
Եւ եսդ ի վեր | քան զոր ի տանդ,
Ոյց միաբուն | ես համարիւն,
Որպիսի կեայ | Քրիսութեմիս | Եւ Եփեանասսա,
Եւ որ յարբուն | անգ հասակին | վշտանայ դաղտ,

Ընթերցողները՝ տեսնում են այս տողերի ներգաշխակութիւնը, և սակայն այդ տողերն անյանգ են. ներգաշխակութեան պայմանն այստեղ անդամների կանոնաւորութիւնն է, անդամների վերջին վանկի շեշտուած լինելը՝ որ «Հայկական» անյանգ տաղաչափութեանը նույնացնելու համար մի ընդարձակ դրուածքի մէջ եթէ հարիւրից մի երկու տող անկանոն կազմուած լինի, որ և է հարկից ստիպուած, այդ պատրաստ լինինք ներելու.

Այս պայմանը ճշգութեամբ պահպանն լով Քագրատունին նաև տասնավանկ, հնդավանկ անդամ ներով անյանգ տողերի օրինակներ է տալիս, որ միւսներին հաւասար ներգաշխակութիւն ունին.

Ո՞չ կիբը ի մարդիկ | գըժոխատեսակ,
Ո՞չ քան զամենայն | զըժնդակագոյն
Արոց միանդամ | հանդիպեալ է իմ . . .

Անցնենք այս օրինակներից մեր թուական կամ վանկական տաղաչափութեանը, Առելը մենք ցոյց տուինք որ մեր տաղաչափութեան մէջ բացի վանկերի հաւասար թուից ու յանդերից՝ մի պայման էլ կայ, այն է անդամների կանոնաւոր, հաւասարավանկ լինելը, Խնդիրն այստեղ այն է որ բանաստեղծը պարտաւոր է իւր մի անդամ ընտրած չափը կանոնաւորութեամբ յառաջ տանել. ազատ է նա իւր ճաշակին համեմատ այս կամ այն անդամը կամ ոտը (շողա) ընտրելու, բայց այնուհետև նա իրան կաշկանդուած պիտի համարէ իւր դրած սահմանի մէջ ապա թէ ոչ կարելի չի լինիլ որոշել արուեստը կամայականութիւնից, Եթէ անդամների հաւասարավանկութիւնը խախտուում է, շեշտի պայմանն էլ չէ պահպանուում. այն ժամանակ յանգն էլ նշանակութիւն չունի, և ոտանաւորը միանդամայն անպէտք ու անյաջող է, Ծեշտագրութեան պայմանը զանց անելն իսկապէս արգէն անդամների անհաւասրութիւն է յառաջ բերում. բայց մենք անդամների անհաւասրութիւն ասենք յօդուածիս սկզբներում։ Ընդամների վերջին վանկը շեշտելը մեր նոյն իսկ լաւագոյն բանաստեղծները մի անհրաժեշտ պայման չեն համարում, մի բան որ խախտութեամբ աշխատում են պահպանել մեր տաճկահայ բանաստեղծները. այստեղից ահա և մեր բանաստեղծների տաղաչափութեան յաճախակի նկատուող անկանոնութիւնը,

Օրինակ,

Մայր Արաքսի | ափերով
Քայլամուլոր | հըն-ամ է.
Հին հին դարուց | յիշատակ
Ալեաց հեղ | ուրբա՛-ամ է.

Յաջորդ տունը միանդամայն կանոնաւոր է, և եթէ մենք երկրորդ տան համապատասխան շեշտերով կարդալու լինինք այս, առաջին, տունը՝ մենք ստիպուած պիտի լինինք կարդալու մեր լեզուի համար խորթ ու անբնական շեշտերով՝ հըն-ամ է, Ահա՝ պարուած է.

Մեր խեղճ ո՛չէ | ուսում չունի,
Զունի ուսում | խելք ալ չունի.

Այս տողերը կազմուած են քառականկ անդամներից, բայց իրօք առաջին տողը երկրորդին ընաւ չէ համապատասխանում և ունի հետեւալ կազմութիւնը.

Մեր խեղճ աղդ | ը ուսում չունի—3—5.

Սակայն Ի՞նչ. մեր ականջը կարծես ընտելացել է արգէն այսպիսի անկանոնութեանց, և մեր քննադատներն այդպիսի փափուկ խնդիրների յետեւից լինինելու ախորժակ չունի՞ն . . . Ինչ և իցէ, մենք մի կերպ հաշտուում ենք այսպիսի տաղաչափութեան հետ, երբ գոնէ յանդով տողերը միմեանց նման են լինում, յանդը դոցանից խլելով՝ մենք կը զրկենք դոցա իրենց միակ զարդից։

Եյստեղ ահա կարող ենք ասել թէ ինչ ենք հասկանում մենք «մի ուրիշական չափ, ասելով՝ անշահ տողեր ունենալու համար». «Հայկականը, մի կողմ թողնելով, մենք էր լուսավորութեան մէջ էլ լուսավորութեան անշահ ներդաշնուի ուղիւ անենու շնորհանդաւ անդամներն իւղութեան էնցութեան էնցութեան պայմանը հանդիպութեան էնցութեան պայմանը կարող է Ընորհալին. Քագրատունու չափերի մէջ ևս այն ձևերը՝ ուր առաջ ինչ չէ որութեան, իսկապէս կարող են նկատուել որպէս լուսավորութեան անյանգ տողեր. յոյն պարերգութեանց մէջ մենք հանդիպում ենք այդպիսի օրինակների հետեւալ կազմութեամբ տողերի մէջ. 3—3—3, 4—4, 4—3, 5—5 և այլն։

Ահաւասիկ անյանգ ոտանաւորի օրինակներ Ընորհալուց.

4—4—4. Ծարաւեցաւ | Տէրն ի խաչին | որպէս ըզմարդ,

Այն որ արար | զնվիկանոս | ծով գեղեցիկ,
Սամարացւոյն | ջուր խնդրելով | աղբիւրը
Տէրն,

Այն որ արրոյց | տիեզերաց | զանմահութիւն . . .

5-4-4. *Խյալը ի շերկը ի յայտնեալ ցուցաւ | Հողեղինացս*

Էւական բանին | բնութիւն մարմնով | պա-
րածածկեալ

Այսօր ի Թաթոր | արտավայլեալ | պայ-
ծառ ծագմամբ ...

5-2-5. Տիրական տօնիւս | այսօր | եկայք ցնծաս-
ցուք.

Րախճանայ այսօր | Երկինք | անմարմնականք
Կանք
Կորոգի երկիրս | այսօր | գալըստեամբ |
Փըլէին ..

3—5. Առը Եղեմ | բանաւոր տընկօյն

5-5. Կոր Աղամենիքէն | Հընոյն նորոգօդ.

ԵՐԿԱԿԻ | ՊԻՄԱՆԻՑ ԱՆԻՇ :

(Ն. Ընորհայւոյ «Բանք չափաւ») և այլն.

Ընորհալու այս և սոցա նման տաղերը բոլորով վին Ներդաշնակ չափ ունին, թէպէտե անյանդ են բայց ինգիրն այն է որ մի անգամ ընտրած չափը ամրաղջ երգի մէջ խստութեամբ պահպանուում է կը բարձր պահանձնեած հանդերք:

«Համընտի» թարգմանիչ պ. Մասեհեանն իրաւունքով անհրաժեշտ է դատել թարգմանել Շէքսպիրի անյանդ տաղերով գրուած ողբերգութիւնը անպատճառ նոյնպէս անյանդ տաղերով և ընտրել է մի չափ, որ վանկերի հաշուի կողմից շատ մօտ է անդլիական բնագրին։ Այդ չափն է տասն և մեկ վանկանի մի տող՝ որ պ. Մասեհեանը ցոյց է տալիս Արուանկ, ուստի կուգաս երգի։ Պ. Աղայեանի «Տոբը Ասգեղի» սախերգանիքի և Յ. Յովհաննիսեանի «Տոբը Ասգեղի» բանաստեղծութեան մէջ։

Նկատենք նախ և առաջ, որ այդ երեք օրինակն էլ յանդաւոր ոտանաւոր են. բայց զիցուք թէ նոյն չափը կարող է և անյանգ տողերի հիմք կազմել.

Երդ՝ տեսնենք թէ ինչ կազմութիւն է տալիս
ու Մասէչեանը այդ չափին, Պ. Աղայեանի «Տոր-
քը», գժւաղդաբար ձեռքի տակ չունիք. իսկ Կը-
ուունկը» և Յ. Յովհաննիսեանի «Արտաւազդը» ի
րանց շեղումներովն հանգերձ՝ կարծես հետեւալ
պատկերն են ներկայացնում - 3 - 3 - 5. եթէ հիմ-
քըն այս է, ապա ուրեմն դորանից շեղուող տողերն
անկանոն պիտի համարենք:

Յավշաննէս խան Մասէհեանն էլ խսկապէս այդ-
պէս և հասկանում այդ տռղը՝ բաժանելով միայն
երկու անգամի, առաջինը զեցավանկ, երկրորդը՝
Շնեգավանկ, և առաջ առաջինը բաժանելով կրկին
երկու մասի — Երեսունչորս կոչութեր, ուստի Երես և Երես,
Հինգ և Արի, Երեսունչորս կոչութեր։ Այս Նշանակումէ թե
Նորա տաղաչափութիւնը պիտի Ներկայացնէ Հետեւ

եալ պատկերը. 3—3—5, 2—4—5, 5—1—5, 4—
2—5, 1—5—5, Եյսքան ազատ գասաւորութիւնը
մեր համեստ կարծիքով արդէն կամայականութեան
է մօտենում: և տարաբաղդաբար այդ կամայակա-
նութիւնը կատարեալ անելու համար պ. Մասէ հեա-
նը աւելցնումէ հետևեալը. «մենք անխտիր գործ
ածեցինք վեց և հինգ, նոյնպէս հինգ և վեց, և
երրեմն իսկ հինգ և հինգ: և վեց վեց վանկեր»:
Եյտեղ արդէն մարդ հաշիւը կորցնում է և տես-
նումէ որ պ. Մասէ հեանը իրօք բաւական է համա-
րում տողերի մէջ միայն վանկերի ընդհանուր թի-
ւը (11) պահել, այդ էլ տեղ տեղ 10 կամ 12 է
դառնում:

Միանքամայն համակրելով պ. Մասէ Հեանի
գեղեցիկ ցանկութեանը Ըէքսպիրի տողերին համա-
պատասխան չափ գտնելու և նոյն իսկ յարմար դա-
տելով նորա ըտրած հիմնական չափը՝ մենք բողո-
քում ենք սակայն այդ կամայականութեան գեմ, որ
իրապէս ջնջումէ ամենայն չափ: Ի՞նչ չափ: Ի՞նչ
ներդաշնակութիւն կայ հէնց այս տողերի մէջ: որ
պատահար բանում ենք «Համլէտի» մէջ:

Այս գործը լաւ տնօցաւ—Տէր իմ և տիկին
Երկար վիճարանել. թէ արդեօք ի՞նչ է
Ա-հՀափառութիւնը, թէ ի՞նչ է պարոբը,
Ինչո՞ւ օրը օր՝ գիշերը՝ գիշեր.
Եւ ժամանակո է՞ր ժամանակ է . . .

DEPARTMENT OF STATE
WASH. D. C.

Որ կտորը որ վերցնէք պ. Մասէհնասի թարգ-
մանութիւնից՝ չէք կարող միմեանց յետեկից երկու
—երեք այնպիսի տող գտնել, որ իրար նման լինին,
և հարկաւ չկայ և ոչ մի բանաւոր պատճառ, որով
կարողանայինք բացատրել թէ ինչո՞ւ այս տողն այս
կազմութիւնն ունի, իսկ այն տողը մի այլ ձև, ոչո՞ն
իսկ «հայկական» տաղաչափութեան մէջ ուր սղման,
շնորհիւ այնպիսի բազմազանութիւն է նշմարում
այդշափ կամայականութիւն չե կարող տեղի ունե-
նալ. նախ որ սղումը պիտի ունենայ իւր բանաւոր
հիմքը և երկրորդ՝ սղման երեսոյթն էլ այլ և այլ
անդամների մէջ սահմանափակուում է որոշ չափով:
Այս ապաքէն կամայականութիւնը, օրէնք չճանաչող
աղատութիւնն արգէն արուեստի հետքն իսկ պիտի
ժիտէ:

Սակայն պ. Մասէհեանը մի գեղցիկ նպատակ
է ունեցել, երբ իրքև կանոն սահմանել է իւր բազ-
մատեսակ, խայտաճամուկ տողերից բաղկացած տա-
ղաչափութիւնը, այդ այն է որ «այս պէսպիսութիւ-
նը արդէն (?) ջնջում է ականջի զարկող միօրի-
նակութիւնը». Յիրաւի շատ տաղտկալի պիտի լինէր
լսողութեան համար, եթէ բեմից ամբողջ երկու—
երեք ժամ շարունակ դերասանը ձայնի միօրինակ

ելեկջով մի և նոյն շեշտաւորութեամբ մեզ մի բան խօսելու լինէր: Բայց միթէ տաղաչափութեան արուեստը՝ խօսքի ներգաշնակութիւնը ոտքի տակ տալով միայն կարող ենք խուսափիլ միօրինակութիւնից, Մենք կարծում ենք որ նոյն իսկ ամենայն ճշգրութեամբ մի և նոյն չափին հետևելով օր — 3—3—5, 1—5—5 * ելն: թառերական գրուածքներում կարելի է խուսափիլ միօրինակութիւնից, ձանձրալի լինելուց դրա համար դաս առնենք նոյն ինքն Շեքսպիրից: Եթէ համեմատելու լինինք նորա երիտասարդ հասակում ստեղծուած գործերը իւր արդէն հասունացած հանձարի պտուղների հետ մենք կը նկատենք մի երկոյթ, որի վրայ գիտնական շեքսպիրաբաններն ու շադրութիւն գարձրել են. մինչ առաջին կարգի գրուածքներում մի միտք: մի նախադասութիւն սովորաբար վերջանում է տողի հետ: Երկրորդ շրջանի ողբերգութեանց մէջ շատ ու շատ յաճախ տողի կիսումը: տողի մէջ առ հասարակ՝ նախադասութիւնը իւր վախճանն է առնում: Աերջին հանգամնելքը ոտանաւորին զարմանալի կենդանութիւն է տալիս: մօտեցնումէ խօսակցական լեզուին՝ գրեթէ աննշարելի է դարձնում նոյն իսկ ոտանաւորի յանդաւոր լինելը: Եթէ յանդաւոր է: Ոտանաւորի այդ յատկութիւնը մի արժանաւորութիւն է բեմական տեսակէտից: և մեղմուումէ որ այս պայմանն էլ բաւական կը լինէր հայերէն ատաշափութեան միօրինակութիւնը նուազեցնելու:

Այս պայմանն ընդունելուց յետոյ: Եթէ համաձայնենք էլ թէ մի մեծ գրուածքում լեզուն գժուարութիւններ կարող է յառաջ բերել ճշգրութեամբ հետևելու մի և նոյն չ չափի, այն ժամանակ մենք կարծում ենք որ կարելի է ընտրել ու պայմանաւոր մի չափ Քագրատունու մեզ տուած օրինակներից: որ վերը յիշեցինք, կամ ք. մեր այժմեան գործածական չափերից մէկն ու մէկը՝ որոշ ազատութեամբ ձևաւորուած: որ սակայն անսահման պիտի չլինի, կամոյականութիւն պիտի չդառնայ: Օրինակի համար նոյն իսկ պ. Մասէհեանի ընտրած չափը՝ բաւական չէր լինի միթէ երկու կամ երեք ձեւի տող ընտրել: տասն և մէկ վանկի ընդհանուր հաշիւը պահպանելով — 3—3—5 և 1—5—5 կամ 3—3—5 և 2—4—5 և այլն. այսպիսի պայմանով գրուած տաղեր ունի: ինչպէս ցոյց տուինք արդէն, և. Ընօրհալին:

Ինչ և իցէ, վերջացնելով մեր խօսքը՝ մենք

պնդում ենք որ այսուհետեւ մեղանում կարող է գոյութիւն ունենալ միմիայն այն պայմանով՝ որ ամենայն ճշգրութեամբ պահպանուի անդամներէ կառավարութեան մեջ անդամների վերջաւորութեան նկատմամբ: առանց այս պայմանների գրուածը, այն էլ անցանգ: ոչ մի կերպով չափաբերական համարուել չէ կարող:

Յ. Յ.



Հի՞ն ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐԻ.

Առաքել բաղիշեցի, Նալաշ, Կարապետ վարդապետ բաղիշեցի, Գրիգոր ծերենց:

Զեռագիր Ա. Խջ. Մատենագարանի № 282.

Տ. Ա. Ա. Բ. Ա. Ն. Յ.

(Նարունակութիւն):

ԹՈՒՂ.Թ. 13 ա.

Նախընթաց Բ. ծալքն ընկած լինելով՝ այս երեսի վերայ սկզբում միայն մի վերջաբան է մնացել կորած տաղի: որին յաջորդումէ առանց գըլխակարգութեան յայտնի Գոհար վարդն: և սունաւորը մի բոլորովին նոր ձեռվ և խառն օտարարբառ տողերով:

Ահա այդ երգի մնացորդը:

Գոհար վարդըն վառվառեալ: Կրիմէ,
Վեհից վարսիցն արփենից: Կրիմէ,

Թուրան նիզաթէ, Թուրան նիզաթէ, թէ զաթէ՝ սըմընտիլ կուլիա պանիա՝ ուսայ (?) աւսայ աւսէ կունացիա: էլկունացի էլ կունացի է աւս:

Ի յաւուր բաժանման հոգւոյս ի մարմընոյս զինահար զքեզ ունիմ: որ մարդ ես և կոյս:

Թ. 13 բ. — Գոհար վարդ ինքնագոյն

Սիրամարդ ոսկէգոյն:

Գոհար վարդ ինքնագոյն յարփւոյն

Սիրամարդ ոսկէգոյն:

Գու լուսին լի լուսով ի մէջ գիշերի:

Գու զօհալ լուսափայլի յառաւօտի:

Այս Մարիամ աղաչեա, պաղատեա,

ինդրեա, հայցեա, աղօթեա

ես եմ քո ծառայ:

Ի յաւուր բաժանման

Գու ծաղիկ անթառաւ:

* Այս կամ այն չափի ընտրութիւնը համարենք գործարողի ծաշակի գործ. թող ծաշակի տէք բանաստնդը ցոյց տայ մեզ թէ թուն է աւելի ներդաշնակ: